ՀԱՎԵԼՎԱԾ 4
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68 Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ը Հավելվածի

# ԱԶԴԱԳՐԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

**«ՏՈՆՏՈՆ» ինվեստիցիոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,**

**հասցե՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Դեղատան փ. 2, հեռախոս՝ (37410) 58 02 62,**

**ֆաքս՝ (37410) 54 54 77, էլ. փոստ՝ info@tontoninvest.com,**

**ինտերնետային կայք՝ www.tontoninvest.com**

| | |
|---|---|
| արժեթղթերի դասը՝ | անվանական արժեկտրոնային պարտատոմս |
| արժեթղթերի ձևը՝ | ոչ փաստաթղթային |
| արժեթղթերի քանակը՝ | 5,000 (Հինգ հազար) հատ |
| արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ | 50,000 (Հիսուն հազար) ՀՀ դրամ |
| արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝ | 250,000,000 (Երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ |

---

«ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ ՍՈՒՅՆ ԱԶԴԱԳՐՈՒՄ ԶԵՏԵՂՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՃՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ: ԳՐԱՆՑՄԱՆ ՓԱՍՏԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ»:

*«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի ամբողջականությունը»:*

---

ստորագրող անձինք՝

| | | | |
|---|---|---|---|
| Գոռ Առաքելյան | Տնօրեն | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| Վարուժան Շահումյան | Գլխավոր հաշվապահ | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| Հերմինե Այդինյան | Ներքին վերահսկողության և աուդիտի ծառայության ղեկավար | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

Ստորագրությունները հավաստում եմ (ստորագրությունները հավաստվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի, կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

| Գոռ Առաքելյան | Տնօրեն | | |
|---|---|---|---|
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

Ազդագրում ներառվող տեղեկությունների ցանկը ՝ տես էջ 3 :

Կ.Տ.

Ազդագրում ներառվող տեղեկությունների ցանկը

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ** ........ **4**

**ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** ........ **8**

Ընդհանուր տեղեկություններ ........ 8
Պարտատոմսերի գնի վերաբերյալ տեղեկություններ ........ 9
Պարտատոմսերից ստացվող եկամուտների վերաբերյալ տեղեկություններ ........ 9
Սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ ........ 10
Տեղեկություններ պարտատոմսերի տեղաբաշխմանը մասնակցող անձանց և նրանց մասնակցության չափի վերաբերյալ ........ 10
Բաժանորդագրությունների վերաբերյալ տեղեկություններ ........ 10
Տեղաբաշխված (տեղաբաշխվող) պարտատոմսերից ստացվող սեփականատերերի եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը ........ 11
Պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքները ........ 11
Այն կազմակերպությունները, որոնք իրականացնում են պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումը և (կամ) գրանցումը ........ 11
Թողարկման նպատակը ........ 12

**ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** ........ **12**

*ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ* ........ *12*
Թողարկողի պատմությունը և զարգացումը ........ 12
Ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ տեղեկություններ ........ 12
Թողարկողի աուդիտն իրականացնող անձինք ........ 13
Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները ........ 13
Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների երաշխավորողի վերաբերյալ տեղեկություններ ........ 13
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը ........ 13
Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ առկա օպցիոնների վերաբերյալ տեղեկություններ ........ 14

*ԹՈՂԱՐԿՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ* ........ *14*
Ռիսկային գործոններ ........ 14
Թողարկողի գործունեության մեջ ներգրավված գույքի նկարագիրը ........ 20
Այն անձանց անվանացանկը, որտեղ թողարկողը, ներառյալ՝ նրա դուստր ընկերությունները, բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր են ........ 21
Հարկային արտոնությունները ........ 21
Դատական և իրավական ընթացակարգը ........ 21
Փոխկապակցված գործարքների վերաբերյալ տեղեկություններ ........ 22
Թողարկողի նախատեսվող գործունեությունը և հեռանկարները ........ 24

*ԹՈՂԱՐԿՈՂԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ* ........ *25*
Ֆինանսական հաշվետվություններ ........ 25
Ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների փոփոխությունների վերաբերյալ ........ 25
Թողարկողի ֆինանսական գործունեությունը ........ 25

*ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ* ........ *27*
Ընդհանուր տեղեկություններ կառավարման մարմինների վերաբերյալ ........ 27

*ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ, ԹՈՂԱՐԿՈՂԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ* ........ *30*
Թողարկողի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ ........ 30
Թողարկողի նշանակալից մասնակիցների վերաբերյալ (բացառությամբ այն մասնակիցների, որոնց պատկանում է թողարկողի բաժնային արժեթղթերի 20 և ավելի տոկոսը) ........ 31

*ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ* ........ *31*

**Հավելված 1** ........ **33**

**Հավելված 2** ........ **37**

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**Թողարկողի պարտատոմսերի վերաբերյալ տեղեկություններ**

Թողարկվող արժեթղթերը անվանական ոչ փաստաթղթային պարտատոմսեր են, ոչ փոխարկելի, արժեկտրոնային՝ վճարման կիսամյակային պարբերականությամբ:
Նախատեսվում է հրապարակային տեղաբաշխումից հետո թողարկվող պարտատոմսերը ցուցակել «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում:
Թողարկումն իրականացվելու է 250,000,000 (Երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով (5,000 (Հինգ հազար) հատ պարտատոմս, մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 50,000 (Հիսուն հազար) ՀՀ դրամ):
Թողարկվող պարտատոմսերի ժամկետայնությունը 12 ամիս է:
Պարտատոմսերի արժեկտրոնային եկամտաբերությունը կազմում է տարեկան 11.00%:

Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովված է Թողարկողի ընդհանուր գույքով և այլ ակտիվներով: Պարտատոմսերը երաշխավորված են Թողարկողի հետ փոխկապակցված անձի՝ Վահագն Առաքելյանի կողմից:

Թողարկողի պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման «Շահութահարկի մասին» և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքների համաձայն:

Պարտատոմսերի սեփականատերը պարտատոմսով կարող է իրականացնել ցանկացած գործառույթ, որը բխում է սեփականության իրավունքից: Պարտատոմսերի սեփականատերերը իրավունք ունեն ազդագրում նշված կարգով ու ժամկետներում ստանալ պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտը, ինչպես նաև պարտատոմսի մարումից ստացված գումարը: Արժեկտրոնի չվճարման դեպքում պարտատոմսի սեփականատերը իրավունք ունի Թողարկողից և/կամ երաշխավորողից պահանջել վճարվելիք գումարը, պահանջը չբավարարելու դեպքում՝ դիմել դատարան:

Պարտատոմսերի թողարկման նպատակը Թողարկողի շրջանառու միջոցների համալրումն է:

## Թողարկողի վերաբերյալ տեղեկություններ

### *Ընդհանուր տեղեկություններ*

«ՏՈՆՏՈՆ» ինվեստիցիոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ստեղծվել է 1999թ. և իր ստեղծման օրվանից ակտիվ դեր է կատարել Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկայում: 2004թ.-ից Թողարկողը հանդիսանում է միակ ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունը, որը պետական պարտատոմսերի առաջնային շուկայում ունի դիլերի կարգավիճակ:

Թողարկողը 2004թ.-ից ՀՀ արժեթղթերի շուկայում պահառության գործունեություն է իրականացնում, ընդ որում, Թողարկողն առաջինն է ստացել պահառության գործունեության իրականացման լիցենզիան:

Թողարկողն իր գործունեությունը ծավալում է ՀՀ, ք. Երևան, Դեղատան փ. 2 հասցեում:

Թողարկողը հանդիսանում է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի անդամ, 2004թ.-ից միացած է ՍիԲիԷյՆեթ միջբանկային համակարգչային ցանցին:

Թողարկվող պարտատոմսերը երաշխավորված են Թողարկողի հետ փոխկապակցված անձի՝ Վահագն Առաքելյանի կողմից (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հր, Անառյան 22, բն. 30), ով հանդիսանում է Թողարկողի 90%-ի սեփականատերը:

*Թողարկողի գործունեության վերաբերյալ տեղեկություններ*

Թողարկողի գործունեության հիմնական տեսակներն են.

- հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում,
- իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում,
- իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքների կատարում,
- արժեթղթերի երաշխավորված կամ չերաշխավորված տեղաբաշխման իրականացում,
- արժեթղթերի պահառություն,
- արժեթղթերի փաթեթի կառավարում,
- արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում հաճախորդներին,
- արտարժույթի դիլերային/բրոքերային առք ու վաճառքի գործառնությունների իրականացում:

Թողարկողն իր գործունեությունը ծավալում է հիմնականում ներքին շուկայում, սակայն, նշենք, որ հաճախորդների ցանկում առկա են նաև օտարերկրյա ներդրողներ:

Թողարկողը, պետական պարտատոմսերի առաջնային շուկայում հանդիսանալով միակ ոչ բանկ դիլեր, տնօրինում է պետական պարտատոմսերի շուկայի ծավալի 2.5-3.0%-ը (ներառյալ ազատ, գրավադրված, ինչպես նաև ռեպո համաձայնագրերով գրավադրված պարտատոմսերը): Արժեթղթերի շուկայում մասնագիտացված անձանց շարքում Թողարկողը զբաղեցնում է առաջին տեղը ըստ ակտիվների, ինչպես նաև ըստ պահառության հանձնված արժեթղթերի ծավալի: Թողարկողի ակտիվները կազմում են ներդրումային ընկերությունների ընդհանուր ակտիվների մոտ 30%-ը (աղբյուրը՝ www.armex.am), իսկ ըստ պահառության հանձնված արժեթղթերի ծավալի՝ մոտ 80%-ը (աղբյուրը՝ ՀՀ ԿԲ տեղեկագիր):

Թողարկողն արտոնագրված է արժեթղթերի շուկայում մասնագիտական գործունեության հետևյալ լիցենզիայով՝ թիվ 0007 - ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա, տրված 27/06/2008թ.:

Թողակողն իր գործունեության ինը տարիների ընթացքում ակտիվ դերակատարում է ունեցել ՀՀ արժեթղթերի շուկայում: Եվ այսօր ՀՀ արժեթղթերի շուկայում տեղի ունեցող արդի փոփոխությունները, մասնավորապես՝ OMX շվեդական ընկերության մուտքը Հայաստանի արժեթղթերի շուկա, ինչպես նաև ակնկալվող փոփոխությունները պարտադիր ապահովագրության, կենսաթոշակային հիմնադրամի օրենսդրական դաշտում, նոր հնարավորություններ են ստեղծում Թողարկողի գործունեության հետագա զարգացման համար:

Առաջիկա երեք տարիների ընթացքում իր գործունեությունն ընդլայնելու նպատակով Թողարկողը նախատեսում է մեծացնել կապիտալիզացիան՝ լրացուցիչ ֆինանսական միջոցներ համալրելու միջոցով: Դա նախատեսվում է իրականացնել երկու եղանակով. ներքին՝ չբաշխված շահույթի միջոցով և արտաքին՝ բաժնեմասերի կամ բաժնետոմսերի

թողարկմամբ: Վերջինս ենթադրում է Թողարկողի կազմակերպաիրավական ձևի փոփոխություն՝ 2008-2009թթ. ընթացքում ՍՊԸ-ից վերակազմավորվելով ԲԲԸ-ի:

Թողարկողն իր գործունեության ընթացքում բախվում է տարբեր ռիսկային գործոնների հետ: Ներդրողները մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը, պետք է տեղյակ լինեն այդ ներդրման հետ կապված ռիսկերի մասին:

Պարտատոմսերում ներդրում կատարողները բախվում են ինչպես Թողարկողի գործունեության հետ կապված, այնպես էլ պարտատոմսերին բնորոշ ռիսկերի հետ: Այդ ռիսկերից առավել կարևոր են՝ տոկոսադրույքների փոփոխման, արտարժութային, իրացվելիության, գործառնական և ինֆլյացիոն ռիսկերը:

*Թողարկողի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ*

Ստորև ներկայացված են Թողարկողի գործունեությանը վերաբերող հիմնական ֆինանսական ցուցանիշները վերջին 3 տարվա համար:

*հազ. ՀՀ դրամ*

| | 31.12.05 | 31.12.06 | 31.12.07 |
|---|---|---|---|
| Հասույթ | 6,569,779 | 5,560,516 | 4,573,784 |
| Շահույթ | 402,682 | 390,462 | 297,027 |
| Շահույթի տոկոսային մեծությունը հասույթում | 6.13% | 7.02% | 6.49% |
| Ակտիվներ | 2,911,341 | 2,874,514 | 2,437,243 |
| Սեփական կապիտալ | 655,682 | 784,144 | 761,977 |
| Ակտիվների եկամտաբերություն | 10.90% | 13.41% | 10.33% |
| Սեփական կապիտալի եկամտաբերությունը | 44.01% | 59.55% | 37.88% |

Զուտ շահույթի մեծության նվազումը պայմանավորված է ՀՀ արժեթղթերի շուկայում տարբեր ժամկետայնության պարտատոմսերի եկամտաբերությունների սպրեդի կրճատմամբ, ինչը բացասաբար է ազդել շահույթի ստացման հնարավորությունների վրա:

*Թողարկողի կառավարման մարմինների և կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ տեղեկություններ*

Թողարկողի կանոնադրությամբ սահմանված Թողարկողի կառավարման մարմիններն են Թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովը և Թողարկողի գործադիր մարմինը՝ տնօրենը:
Թողարկողի կառավարմանը մասնակցող անձինք են՝ Գոռ Առաքելյանը (տնօրեն), Վարուժան Շահումյանը (գլխավոր հաշվապահ) և Հերմինե Այդինյանը (ներքին վերահսկողության և աուդիտի ծառայության ղեկավար):

*Թողարկողի հետ փոխկապակցված անձանց, նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ*

Թողարկողի հետ փոխկապակցված ֆիզիկական անձինք են հանդիսանում Վահագն Առաքելյանը, ում ուղղակիորեն պատկանում է Թողարկողի կանոնադրական կապիտալի 90%-ը (370,800 բաժնեմաս) և Գոռ Առաքելյանը, ում ուղղակիորեն պատկանում է Թողարկողի կանոնադրական կապիտալի 10 %-ը (41,200 բաժնեմաս):

Թողարկողի հետ փոխկապակցված իրավաբանական անձինք են «ԱՐՎԱՆԵ» ՍՊԸ-ն և «ՍԵԴԱՌԻՍ» ՍՊԸ-ն: «ԱՐՎԱՆԵ» ՍՊԸ-ն և Թողարկողը գտնվում են ընդհանուր հսկողության տակ (Վահագն Առաքելյանի և Գոռ Առաքելյանի կողմից, ովքեր հանդիսանում են «ԱՐՎԱՆԵ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի համապատասխանաբար 50% և 50%-ի սեփականատերերը): «ՍԵԴԱՌԻՍ» ՍՊԸ-ն և Թողարկողը նս գտնվում են ընդհանուր հսկողության տակ (Վահագն Առաքելյանի կողմից, ով հանդիսանում է «ՍԵԴԱՌԻՍ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի 40%-ի սեփականատերը):

Թողարկողի նշանակալից մասնակից է հանդիսանում Գոռ Առաքելյանը, ում ուղղակիորեն պատկանում է Թողարկողի կանոնադրական կապիտալի 10 %-ը (41,200 բաժնեմաս):

Թողարկողը չունի նշանակալից մասնակից հանդիսացող իրավաբանական անձ:

***Թողարկողի թողարկած արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ***

Թողարկողը մինչ այժմ թողարկել է բաժնեմասեր:
Հիմնադրման պահին (1999թ. ապրիլի 27-ին) Թողարկողի կանոնադրական կապիտալը կազմել է 5,000,000 ՀՀ դրամ, որը բաժանված է եղել 50 բաժնեմասի, ընդ որում, մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմել է 100,000 ՀՀ դրամ:

Ներկայումս Թողարկողի կանոնադրական կապիտալը կազմում է 412,000,000 ՀՀ դրամ, որը բաժանված է 412,000 բաժնեմասի, մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 1,000 ՀՀ դրամ: Թողարկողի կանոնադրական կապիտալի բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են Թողարկողի մասնակիցներին:

Հաշվի առնելով Թողարկողի կազմակերպական-իրավական ձևը՝ Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերը (բաժնեմասերը) թույլատրված չեն կարգավորվող շուկայում առևտրին: Թողարկողի բաժնեմասերը թողարկված են անժամկետ:

*Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես ազդագրի ներածական համառոտ նկարագրություն, եւ առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական ազդագրի վրա:*
*Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:*

**Ընդհանուր տեղեկություններ**

ա. Պարտատոմսերի դասը և ձևը՝ անվանական ոչ փաստաթղթային արժեկտրոնային պարտատոմսեր:

բ. Թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը՝ 250,000,000 (Երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ, քանակը՝ 5,000 (Հինգ հազար) հատ պարտատոմս, ժամկետայնությունը՝ 12 ամիս:

գ. Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 50,000 (Հիսուն հազար), արժույթը՝ ՀՀ դրամ:

դ. Թողարկվող պարտատոմսերը փոխարկելի չեն:

ե. Պարտատոմսերի տեղաբաշխման կամ առաջարկի իրականացման սկիզբը՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ազդագրի գրանցումից հինգ աշխատանքային օր հետո: Պարտատոմսերի տեղաբաշխումը նախատեսվում է ավարտել տեղաբաշխման սկզբից 10-րդ աշխատանքային օրը: Պարտատոմսերի տեղաբաշխման ժամկետների փոփոխություններ չեն նախատեսվում:

զ. Պարտատոմսերի առաջարկը և տեղաբաշխումը կարող են հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել Թողարկողի լուծարման և փորս-մաժոր հանգամանքների, ինչպես նաև «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի հոդված 21-ի 1-ին մասով սահմանված դեպքերում: Տվյալ դեպքերում վերադարձման ենթակա դրամական միջոցները վերադարձվում են «ՏՈՆՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից 2 աշխատանքային օրվա ընթացքում:

է. Պարտատոմսերի դիմաց վճարումները կատարվում են ՀՀ դրամով՝ մինչև պարտատոմսերի տեղաբաշխման ավարտի օրը: Վճարումներն ընդունվելու են անկանխիկ ձևով՝ «Զարգացման Հայկական Բանկ» բաց բաժնետիրական ընկերությունում բացված 1810052173183327 բանկային հաշվին փոխանցումների միջոցով: Ընդ որում, եթե ներդրողների կողմից դրամական միջոցները Թողարկողի նշված բանկային հաշվին վճարվել են մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 13:00-ն, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվել են տվյալ աշխատանքային օրվա ժամը 13:00-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող աշխատանքային օրը, և համապատասխան պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվում է այդ օրվա հաշվարկով:

ը. Պարտատոմսը մարվում է թողարկման օրվան հաջորդող 12-րդ ամսվա համապատասխան օրը՝ անվանական արժեքով: Պարտատոմսերի մարման գումարը վճարվում է 12-րդ ամսվա համապատասխան օրվա դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ցուցակը ՀԿԴ-ի կողմից ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 6-րդ աշխատանքային օրը:

Թողարկողն իրավունք ունի հետ գնել իր կողմից թողարկված պարտատոմսերը: Այս դեպքում տեղի է ունենում պարտատոմսերի վաղաժամկետ մարում: Պարտատոմսերի սեփականատերն իրավունք ունի չմասնակցել Թողարկողի կողմից հայտարարված պարտատոմսերի հետգնմանը:

Թողարկողը հետգնման օրվանից առնվազն երեք օր առաջ տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցներով իր պարտատոմսերի սեփականատերերին տեղեկատվություն է տրամադրում հետգնման կազմակերպման մասին՝ նախապես

հայտարարելով պարտատոմսերի այն եկամտաբերության մասին, որով պատրաստվում է հետ գնել պարտատոմսերը և այն ծավալի մասին, որը պատրաստվում է հետ գնել: Պարտատոմսերի հետգնման կարգը մանրամասն նկարագրված է Թողարկողի կողմից հաստատված պարտատոմսերի թողարկման պայմաններում ու պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգում (ներկայացված է կից փաստաթղթեր բաժնում):

թ. Պարտատոմսերը առանձնահատուկ ապահովվածություն չունեն: Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովված է Թողարկողի ընդհանուր գույքով և այլ ակտիվներով: Պարտատոմսերը երաշխավորված են Թողարկողի հետ փոխկապակցված անձի՝ Վահագն Առաքելյանի կողմից:

ժ. Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին որոշումն ընդունվել է 2008թ. հուլիսի 24-ին Թողարկողի մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 553 արձանագրությամբ:

**Պարտատոմսերի գնի վերաբերյալ տեղեկություններ**

Պարտատոմսերի տեղաբաշխման գինը, այդ թվում՝ տեղաբաշխման ընթացքում, որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$P = \frac{N}{1 + \frac{a * r/2}{b}} * \left[ c * \sum_{j=1}^{m} \frac{1}{(1 + r/2)^{j-1}} + \frac{1}{(1 + r/2)^{m-1}} \right],$$

որտեղ՝

P - պարտատոմսի գնման գինը,
N - պարտատոմսի անվանական արժեքը,
a - մինչև առաջիկա արժեկտրոնի վճարումը մնացած փաստացի օրերի թիվը,
r - տարեկան եկամտաբերությունը,
b - տվյալ փուլի տևողությունը օրերով,
c - արժեկտրոնի կիսամյակային եկամտաբերությունը,
m - այդ պահին մնացած արժեկտրոնային վճարումների թիվը:

**Պարտատոմսերից ստացվող եկամուտների վերաբերյալ տեղեկություններ**

Պարտատոմսերի արժեկտրոնային եկամտաբերությունը տարեկան 11.00% է:
Պարտատոմսերով նախատեսվում է կիսամյակային արժեկտրոնների վճարում՝ պարտատոմսի անվանական արժեքի 5.50%-ի չափով:
Պարտատոմսը մարվում է թողարկման օրվան հաջորդող 12-րդ ամսվա համապատասխան օրը՝ անվանական արժեքով: Պարտատոմսերի մարման գումարը վճարվում է 12-րդ ամսվա համապատասխան օրվա դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ցուցակը ՀԿԴ-ի կողմից ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 6-րդ աշխատանքային օրը:
Պարտատոմսերի դիմաց վճարումը կատարվում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից տրամադրած ցուցակում ներառված անձանց բանկային հաշիվներին:
Թողարկողը պարտատոմսից ստացվող եկամտի վճարումը կատարում է թողարկման օրվան հաջորդող 6-րդ և 12-րդ ամսվա համապատասխան օրվա դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ցուցակը «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա

ընթացքում, բայց ոչ ուշ, քան արժեկտրոնային եկամտի մարման 6-րդ աշխատանքային օրը:
Ռեզիդենտներին, ինչպես նաև ոչ ռեզիդենտներին պարտատոմսից ստացվող եկամտի վճարումը կատարվում է անկանխիկ՝ ներդրողի բանկային հաշվին:

**Սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ**

ա. Թողարկողի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ պարտատոմսերի թողարկման որևէ սահմանափակում չկա:
Պարտատոմսերում ներդրում կատարողների նկատմամբ որևիցե սահմանափակում չկա:
բ. Բաժանորդագրության նվազագույն և առավելագույն մեծությունը կազմում է համապատասխանաբար 1(Մեկ) և 5,000 (Հինգ հազար) հատ պարտատոմս:

**Տեղեկություններ պարտատոմսերի տեղաբաշխմանը մասնակցող անձանց և նրանց մասնակցության չափի վերաբերյալ**

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվում է Թողարկողի կողմից:

**Բաժանորդագրությունների վերաբերյալ տեղեկություններ**

ա. Պարտատոմսերի բաժանորդագրությունն իրականացվելու է Թողարկողի թիվ 48 հրամանով հաստատված պարտատոմսերի բաժանորդագրության կարգի համաձայն (Հավելված1):
Պարտատոմսեր ձեռք բերելու նպատակով ներդրողը Թողարկողին է ներկայացնում.
- բաժանորդագրման հայտ,
- անձնագրի պատճեն՝ ֆիզիկական անձի համար, ՀՎՀՀ, պետական գրանցման վկայականի և կանոնադրութան պատճեն՝ իրավաբանական անձի համար,
- վճարման անդորրագրի պատճեն, որը հավաստում է պարտատոմսի դիմաց վճարված գումարի փոխանցումը:

Թողարկողը վերոհիշյալ փաստաթղթերը ստանալուց հետո ստուգում է փաստաթղթերի իսկությունը և հայտում նշված ծավալի (քանակի) պարտատոմսերի առկայության դեպքում բավարարում է հայտը և «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ին տալիս է փոխանցման հանձնարարական:
Բաժանորդագրման հայտը մինչև ժամը 13:00-ն ներկայացնելու դեպքում արժեթղթի փոխանցման հանձնարարականը «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ին է տրվում հենց այդ օրը, իսկ ժամը 13:00-ից հետո ներկայացնելու դեպքում՝ հաջորդ օրը:
Բաժանորդագրման հայտի մասնակի բավարարման դեպքում ավել վճարված գումարը վերադարձվում է հայտատուի կողմից բաժանորդագրման հայտում նշված բանկային հաշվին երկու աշխատանքային օրվա ընթացքում:

բ. Ներդրողները կարող են գրավոր ձևով Թողարկողից ամբողջությամբ կամ մասնակի հետ կանչել պարտատոմսերի բաժանորդագրությունների իրենց հայտերը՝ դրանք ներկայացնելուց հետո տասս աշխատանքային ժամվա ընթացքում, եթե մինչ այդ Թողարկողը չի բավարարել ներդրողների հայտերը կամ տվյալ հայտերի հիման վրա գործարքներ չեն կատարվել:

գ. Ներդրողի կողմից բաժանորդագրության մասնակի հետ կանչելու դեպքում ներդրողը Թողարկողին է ներկայացնում նոր հայտ, իսկ նախկինում ներկայացված հայտը անվավեր է ճանաչվում: Եթե նման դեպքերում, առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա Թողարկողը հայտի հետ կանչման ամսաթվից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը անկանխիկ եղանակով վերադարձնում է ներդրողին:

**Տեղաբաշխված (տեղաբաշխվող) պարտատոմսերից ստացվող սեփականատերերի եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը**

Պարտատոմսերում ներդրում կատարող անձը եկամուտ կարող է ստանալ երկու դեպքում՝
- պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսներից,
- մինչև մարումը վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (կապիտալի հավելաճ):

Թողարկողի պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման ըստ հետևյալ հարկատեսակների՝
1. շահութահարկ,
2. եկամտահարկ:

Շահութահարկ: Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում (հարկատու են) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների՝ բյուջետային հատկացումների և ամբողջությամբ բյուջե փոխանցվող եկամուտների մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի:

Պարտատոմսերի կապիտալի հավելաճից ստացված եկամուտները, ինչպես նաև տոկոսագումարները ռեզիդենտների համար հարկվում են 20 տոկոս դրույքաչափով, իսկ ոչ ռեզիդենտների համար՝ 10 տոկոս դրույքաչափով՝ համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի:

Եկամտահարկ: Հայաստանի Հանրապետությունում եկամտահարկ են վճարում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:
Պարտատոմսերի կապիտալի հավելաճից ստացված եկամուտները ենթակա չեն հարկման, իսկ տոկոսները ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների համար հարկվում են 10 տոկոս դրույքաչափով՝ համաձայն «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի: Ընդ որում, Թողարկողը պարտատոմսից ստացվող եկամտի վճարման ժամանակ ֆիզիկական անձանց համար հանդիսանում է հարկային գործակալ:

**Պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքները**

Պարտատոմսերի սեփականատերը պարտատոմսով կարող է իրականացնել ցանկացած գործառույթ, որը բխում է սեփականության իրավունքից:
Պարտատոմսերի սեփականատերերը իրավունք ունեն ազդագրում նշված կարգով ու ժամկետներում ստանալ պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտը, ինչպես նաև պարտատոմսի մարումից գոյացած գումարը: Չվճարման դեպքում պարտատոմսերի սեփականատերերը իրավունք ունեն Թողարկողից և/կամ Երաշխավորից պահանջել վճարվելիք գումարը, պահանջը չբավարարելու դեպքում՝ դիմել դատարան:
Պարտատոմսերի սեփականատերն արժեթղթերի երկրորդային շուկայում իրավունք ունի իրականացնել պարտատոմսերով առուվաճառք միայն «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում՝ Թողարկողի պարտատոմսերի՝ շուկայում առևտրին թույլատրված լինելու դեպքում:

**Այն կազմակերպությունները, որոնք իրականացնում են պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումը և (կամ) գրանցումը**

Պարտատոմսերի իրավունքների և պարտավորությունների հաշվառումն իրականացնում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ն, հասցե՝ ՀՀ, 0010, ք. Երևան,

Միեր Մկրտչյան 5բ, հեռ. (374 10) 566 446, 589 151, 543 656, ինտերնետային կայք՝ www.cda.am:
Թողարկողը արժեթղթերի շուկա ստեղծող որևէ կազմակերպության հետ կնքած պայմանագիր չունի:
Թողարկողն իր կողմից թողարկված պարտատոմսերի համար մտադրված է ապահովել շուկա ստեղծողի գործառույթների իրականացում:

**Թողարկման նպատակը**

Պարտատոմսերի թողարկման նպատակն է Թողարկողի շրջանառու միջոցների համալրումը:

ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ***

**Թողարկողի պատմությունը և զարգացումը**

ա. Թողարկողի ֆիրմային անվանումն է՝

| | | |
|---|---|---|
| հայերեն | լրիվ | **«ՏՈՆՏՈՆ» ինվեստիցիոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն** |
| հայերեն | կրճատ | **«ՏՈՆՏՈՆ» ՍՊԸ** |
| ռուսերեն | լրիվ | **Инвестиционное общество с ограниченной ответственностью “ТОНТОН”** |
| ռուսերեն | կրճատ | **ООО “ТОНТОН”** |
| անգլերեն | լրիվ | **“TONTON’’ Investment Limited Liability Company** |
| անգլերեն | կրճատ | **“TONTON’’ Co. LTD** |

բ. Թողարկողը ըստ կազմակերպական-իրավական ձևի ստեղծման օրվանից սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է:

գ. «ՏՈՆՏՈՆ» ՍՊԸ-ն ստեղծվել է 1999թ.: Այն գրանցվել է ՀՀ պետական ռեգիստրում 27.04.1999թ., գրանցման թիվ՝ 282.110.03586, վկայական՝ 02Ա - 045072, այնուհետև ՀՀ կենտրոնական բանկում՝ 27.06.2008թ., գրանցման վկայական թիվ 7, և փաստացի գործունեություն է իրականացնում գրանցման պահից առ այսօր: Թողարկողն իր ստեղծման օրվանից ակտիվ դեր է կատարում Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկայում:
2004թ.-ից Թողարկողը հանդիսանում է միակ ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունը, որը պետական պարտատոմսերի առաջնային շուկայում ունի դիլերի կարգավիճակ:
Արժեթղթերի շուկայում պահառության գործունեության իրականացման առաջին լիցենզիան ստացել է Թողարկողը:
Թողարկողի գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Դեղատան փ. 2:

**Ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ տեղեկություններ**

Թողարկողը հանդիսանում է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի անդամ, որը գտնվում է 0010, ՀՀ, ք. Երևան, Միեր Մկրտչյան 5բ հասցեում:

2004թ.-ից Թողարկողը միացած է ՍիԲիէյՆեթ միջբանկային համակարգչային ցանցին:

**Թողարկողի աուդիտն իրականացնող անձինք**

ա. 2005թ. և 2006թ. անկախ աուդիտորական ստուգումն իրականացվել է «ՔՅԱՎԱՌ ԱՌԻԴԻՏ» աուդիտորական և խորհրդատվական ընկերության կողմից: Կազմակերպության հասցեն է՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության փող. 8, հեռ. (374 94) 057 545 (բջջ.): Վերջինս անդամակցում է Գեղարքունիքի մարզի Առևտրաարդյունաբերական պալատին:
2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն անցկացրել է «ՍՕՍ-Աուդիտ» ՍՊԸ-ն (ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի փ. 25/2-45, հեռ. (374 10) 275 783): Աուդիտի նպատակն էր ձեռք բերել բավարար երաշխիքներ՝ համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական անճշտություններից: Ըստ «ՍՕՍ-Աուդիտ» ՍՊԸ-ի եզրակացության՝ «...ֆինանսական հաշվետվությունները Ընկերության ֆինանսական վիճակի՝ առ 31-ը դեկտեմբերի 2007թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների»: «ՍՕՍ-Աուդիտ» ՍՊԸ-ն անդամակցում է Աուդիտորների ասոցիացիային:

բ. Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում Թողարկողի աուդիտն իրականացրած անձանց կողմից աշխատանքից հրաժարման, վերընտրությանը չմասնակցելու, աշխատանքից ազատման այլ դեպքեր չեն եղել:

**Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները**

ա. Ազդագրում փորձագետների կամ խորհրդատուների մասնագիտական կարծիք չի օգտագործվել:

բ. Ազդագրում ներառված են տեղեկություններ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի ֆոնդային բորսայի ինտերնետային կայքերից (www.cba.am, www.armex.am):

**Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների երաշխավորողի վերաբերյալ տեղեկություններ**

Պարտատոմսերը երաշխավորված են Թողարկողի հետ փոխկապակցված անձի՝ Վահագն Առաքելյանի (հասցե՝ ՀՀ ք. Երևան, Հր. Անառյան 22 շ., բն. 30, անձնագիր AA 0502612, տրված 29/08/1996թ. 007-ի կողմից) կողմից՝ համաձայն 24/07/2008թ. N 01 երաշխավորության պայմանագրի (ներկայացված է կից փաստաթղթեր բաժնում): Վահագն Առաքելյանը հանդիսանում է Թողարկողի 90%-ի սեփականատերը, ինչպես նաև ՀՀ, ք. Երևան, Դեղատան 2 հասցեում գտնվող շենքի 2-րդ հարկի (185.7 ք.մ.) սեփականատերը: 2008թ. հուլիս ամսվա դրությամբ նա որևէ փոխառություն կամ վարկ չունի: 2007թ. վերջին Վահագն Առաքելյանի տարեկան եկամուտը կազմել է 267,324,300 ՀՀ դրամ, իսկ ամսական ծախսերը միջին հաշվով կազմում են 1,000,000 ՀՀ դրամ:

**Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը**

Թողարկողի կանոնադրական կապիտալը կազմում է 412,000,000 (Չորս հարյուր տասներկու միլիոն) ՀՀ դրամ, որը բաժանված է 412,000 բաժնեմասերի, և մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 1,000 (Մեկ հազար) ՀՀ դրամ: Թողարկողի

կանոնադրական կապիտալի բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են Թողարկողի մասնակիցներին:

Ստորև ներկայացված են վերջին երեք տարիների ընթացքում Թողարկողի կանոնադրական կապիտալում տեղի ունեցած փոփոխությունները.

*Աղյուսակ 1.*

| Փոփոխության ամսաթիվը | Կանոնադրական կապիտալը, ՀՀ դրամ |
|---|---|
| 16.02.2004թ. | 353,000,000 |
| 07.08.2007թ. | 412,000,000 |

Թողարկողը նախատեսում է 2010թ.-ի վերջին ավելացնել կանոնադրական կապիտալը մինչև 600 մլն. ՀՀ դրամ:

**Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ առկա օպցիոնների վերաբերյալ տեղեկություններ**

Թողարկողի բաժնեմասերի նկատմամբ առկա օպցիոններ չկան:

## *ԹՈՂԱՐԿՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

**Ռիսկային գործոններ**

Ինչպես բոլոր ֆինանսական կազմակերպությունները, Թողարկողն իր գործունեության ընթացքում բախվում է տարբեր ռիսկային գործոնների հետ: Ներդրողները մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը, պետք է տեղյակ լինեն այդ ներդրման հետ կապված ռիսկերի մասին:

Պարտատոմսերում ներդրում կատարողները բախվում են ինչպես Թողարկողի գործունեության հետ կապված, այնպես էլ պարտատոմսերին բնորոշ ռիսկերի հետ:

Թողարկողի կարծիքով առավել կարևոր ռիսկեր են հանդիսանում.

<u>Տոկոսադրույքների փոփոխման ռիսկ</u>: Տոկոսադրույքների փոփոխման ռիսկը կարող է ազդել ինչպես Թողարկողի գործունեության, այնպես էլ պարտատոմսերի գրավչության վրա: Պարտատոմսերի շուկայում տոկոսադրույքների բարձրացման դեպքում տվյալ պարտատոմսը կարող է դառնալ նվազ շահութաբեր մյուս պարտատոմսերի նկատմամբ: Այդ ռիսկը կարող է ազդել նաև Թողարկողի ֆինանսական վիճակի վրա:

Տոկոսադրույքների փոփոխման ռիսկի գնահատման նպատակով Թողարկողն իրականացնում է արժեթղթերի շուկայի և երկրի իրական հատվածի զարգացման միտումների վերաբերյալ մշտական վերլուծություն:

<u>Արտարժութային ռիսկ</u>: Արտարժութային ռիսկը կարող է ազդել Թողարկողի գործունեության վրա: Վերջին տարիների ընթացքում դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի շարունակական արժեզրկման պարագայում Թողարկողը նպատակահարմար է գտնում պահպանել արտարժույթի կարճ դիրք: Այնուհանդերձ, ԱՄՆ դոլարի փոխարժեքի հնարավոր բացասական տատանումներից խուսափելու նպատակով Թողարկողը սահմանափակում է արտարժութային պարտավորությունների ժամկետայնությունը: 2008թ. ընթացքում արտարժութային պարտավորությունների միջին ժամկետայնությունը կազմել է մոտ 50 օր: Թողարկողի գնահատմամբ 50 օրվա կտրվածքով արտարժութային

դիրքից հնարավոր կորուստը կազմում է մոտ 11 մլն ՀՀ դրամ, մինչդեռ պահուստային կապիտալը 2008թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել է 61.8 մլն ՀՀ դրամ:

<u>Իրացվելիության ռիսկ</u>: Պարտատոմսերի շուկայի զարգացվածության ցածր մակարդակի պայմաններում կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ պարտատոմսի սեփականատերը ցանկացած պահին պարտատոմսը վաճառելու հետ կապված դժվարությունների կբախվի: Այս ռիսկը նվազեցնելու նպատակով Թողարկողը մտադրություն ունի ապահովել թողարկվող պարտատոմսերի համար շուկա ստեղծողի գործառույթների իրականացում, այդ դեպքում ներդրողը ցանկացած պահին կկարողանա վաճառել իր պարտատոմսերը, բայց դա չի երաշխավորում պարտատոմսի սեփականատիրոջ կողմից շահավետ գնով վաճառք:

Քանի որ այս ռիսկը կարող է ազդել նաև Թողարկողի ֆինանսական վիճակի վրա, ուստի Թողարկողը իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով փորձում է կանխատեսել ֆինանսական շուկայում հնարավոր դրամի առաջարկի պակասը և կառավարում է պարտավորությունները ըստ ժամկետայնության և ծավալների՝ ձգտելով հնարավորինս դիվերսիֆիկացնել և նվազեցնել ռիսկը:

<u>Գործառնական ռիսկ</u>: Թողարկողն իր գործունեության իրականացման ընթացքում հնարավոր գործառնական ռիսկերի կանխարգելման ուղղությամբ ձեռնարկում է հետևյալ միջոցառումները.

- հաճախորդի կողմից տրամադրվող հանձնարարականի ստուգում գործառնական բաժնի աշխատակցի և բրոքերի կողմից,
- Թողարկողի աշխատակիցների մասնագիտական որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումների կատարում,
- կնքվող պայմանագրերի կրկնակի ստուգման իրականացում,
- այլ միջոցառումներ:

<u>Ինֆլյացիոն ռիսկ:</u> Թողարկողը կարևորում է նաև ինֆլյացիոն ռիսկը, քանի որ ինֆլյացիայի՝ նախատեսվածից բարձր աճի տեմպի դեպքում պարտատոմսերում ներդրումը կարող է իրականում դառնալ նվազ շահավետ:

Վերը նշված ռիսկերից բացի Թողարկողը կարող է բախվել նաև այլ ռիսկերի հետ, որոնք Թողարկողը ազդագրում նշելու համար էական չի համարել:

<u>**Թողարկողի հիմնական գործունեության նկարագիրը**</u>

ա. Թողարկողի գործունեության հիմնական տեսակներն են.

- հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում,
- իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում,
- իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքների կատարում,
- արժեթղթերի երաշխավորված կամ չերաշխավորված տեղաբաշխման իրականացում,
- արժեթղթերի պահառություն,
- արժեթղթերի փաթեթի կառավարում,
- արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում հաճախորդներին,
- արտարժույթի դիլերային/բրոքերային առք ու վաճառքի գործառնությունների իրականացում:

Թողարկողն իր գործունեության ինը տարիների ընթացքում ակտիվ դերակատարում է ունեցել ՀՀ արժեթղթերի շուկայում: Եվ այսօր ՀՀ արժեթղթերի շուկայում տեղի ունեցող արդի փոփոխությունները, մասնավորապես՝ OMX շվեդական ընկերության մուտքը Հայաստանի արժեթղթերի շուկա, ինչպես նաև ակնկալվող փոփոխությունները պարտադիր ապահովագրության, կենսաթոշակային հիմնադրամի օրենսդրական դաշտում, նոր հնարավորություններ են ստեղծում Թողարկողի գործունեության հետագա զարգացման համար:

բ. Աղյուսակ 2-ում ներկայացված է վերջին 3 տարիների ընթացքում Թողարկողի կողմից մատուցված հիմնական ծառայությունների ծավալը, ինչպես նաև առաջիկա երեք տարիների վերաբերյալ կանխատեսումները.

*Աղյուսակ 2. Թողարկողի կողմից մատուցվող հիմնական ծառայությունների ծավալը*

*(մլն դրամ)*

| Գործունեության տեսակը | 31.12.05 | 31.12.06 | 31.12.07 | 31.05.08 | 31.12.08 կանխատեսում | 31.12.09 կանխատեսում | 31.12.10 կանխատեսում |
|---|---|---|---|---|---|---|---|
| Դիլերային գործունեություն[1] | 18,488.6 | 22,896.4 | 18,881 | 12,161.6 | 16,093.5 | 19,818.5 | 26,816.3 |
| Բրոքերային գործունեություն[2] | - | 545.9* | 255 | 358.6 | 4,600 | 12,900 | 30,000 |
| Պահառություն | 11.4 | 96.0 | 158.7 | 256.6 | 350 | 800 | 3,000 |
| Արժեթղթերի առաջնային տեղաբաշխում | 200 | - | 100 | - | 1,500 | 3,000 | 6,000 |
| Արժեթղթերի փաթեթի կառավարում | - | - | - | - | 300 | 700 | 3,000 |
| Խորհրդատվության տրամադրում | - | - | - | - | 0.4 | 1.5 | 5 |
| *Ընդամենը* | *18,700.0* | *22,992.4* | *19,394.7* | *12,776.8* | *22,494.2* | *36,420.8* | *65,823.8* |

[1]- իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքների կատարում,

[2]- հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում, հաղորդում և իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում,

*-2006թ. բրոքերային գործունեության ծավալները պայմանավորված են 2005թ. վերջին «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի պարտատոմսերի՝ Թողարկողի կողմից առաջնային տեղաբաշխման և շուկա ստեղծողի գործառույթների իրականացմամբ:

Արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործառնությունները իրականացվել են որպես արժեթղթերի դիլերային գործունեության բաղկացուցիչ մաս: Ընդ որում, արտարժույթի դիլերային բորսայական առք ու վաճառքի գործառնությունների փաստացի ծավալը 2007թ. կազմել է 3.9 մլն ԱՄՆ դոլար, իսկ արտարժույթի արտաբորսայական դիլերային առք ու վաճառքի գործառնությունների ծավալը՝ մոտ 3.2 մլն ԱՄՆ դոլար, մոտ 0.9 մլն եվրո և 3.5 մլն ԱՄՆ դոլարի արտարժույթի սվոպ:

Թողարկողն իր հաճախորդներին տրամադրում է նաև արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվություն, որն իրականացվում է առայժմ անվճար՝ որպես լրացուցիչ ծառայություն: Հաճախորդների թվի աճին զուգընթաց Թողարկողն այդ ծառայությանը անդրադառնալու է որպես եկամտի ստացման առանձին աղբյուրի:

Ֆինանսական շուկայի զարգացման արդի միտումները արժեթղթերում ներդրումներ կատարելը դարձնում են բավականին գրավիչ ու խոստումնալից և իրենց հերթին մեծ նախադրյալներ են ստեղծում ներդրումային շուկայի աշխուժացման համար: Հաշվի առնելով վերը նշվածը՝ Թողարկողն առաջիկա տարիներին նախատեսում է ընդլայնել իր

կողմից մատուցվող ծառայությունների ցանկը, մասնավորապես՝ իրականացնել արժեթղթերով գործարքների իրականացման համար հաճախորդներին փոխառության տրամադրում, ընկերություններին կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության հարցերի վերաբերյալ, ընկերությունների վերակազմակերպման հետ կապված խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցում, արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունների, ֆինանսական վերլուծությունների և այլ ընդհանուր ներդրումային առաջարկությունների կազմում եւ տարածում:

գ. Թողարկողն իր գործունեությունը ծավալում է հիմնականում ներքին շուկայում, սակայն, հարկ է նշել, որ հաճախորդների ցանկում առկա են նաև օտարերկրյա ներդրողներ: 2007թ. դրությամբ Թողարկողի կողմից սպասարկվող հաճախորդների թվում ոչ ռեզիդենտ ներդրողների քանակը կազմել է սպասարկվող հաճախորդների քանակի մոտ 15%-ը:

2007թ. Թողարկողի հասույթը կազմել է 4,573,784,000 ՀՀ դրամ, ընդ որում, նախատեսվում է առաջիկա երեք տարիների ընթացքում ավելացնել գործառնությունների ծավալները:

Թողարկողը դիլերային գործառնություններ իրականացնելու համար կնքում է կարճաժամկետ պայմանագրեր: Բրոքերային գործառնություններ իրականացնելու համար կնքում է միջին ժամկետային պայմանագրեր, իսկ պահառության պայմանագրերը կնքվում են անժամկետ:

Աղյուսակ 3-ում ներկայացված է Թողարկողի մասնաբաժինը արժեթղթերի շուկայում իրականացվող գործառնություններում:

*Աղյուսակ 3. Արժեթղթերի շուկայում իրականացված գործարքների ծավալը (առանց ռեպո գործարքների)**

*(մլն դրամ)*

| | ՏՈՆՏՈՆ | | Ընդհանուր | |
|---|---|---|---|---|
| | Բորսայական | Արտաբորսայական | Բորսայական | Արտաբորսայական |
| Բաժնետոմսեր | 69.2 | 20.0 | 492.6 | 2,925.5 |
| Պետական պարտատոմսեր | - | 2,204.7 | 359.6 | 26,714.3 |
| Կորպորատիվ պարտատոմսեր | - | 116.9 | 1314.5 | 800.7 |

* - Տվյալները ներկայացված են 2007թ. դեկտեմբեր, 2008թ. հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս ամիսների համար:

Աղյուսակ 4-ում բերված են արժեթղթերի շուկայում մասնագիտացված անձանց կողմից իրականացված ռեպո գործարքները, ինչպես նաև Թողարկողի մասնաբաժինը ընդհանուրի մեջ:

*Աղյուսակ 4. Մասնագիտացված անձանց կողմից կնքված ռեպո համաձայնագրեր*

*(մլն դրամ)*

| | |
|---|---|
| ՏՈՆՏՈՆ | 10,686.7 |
| Ընդհանուր | 226,674.7 |
| Տոկոսային հարաբերակցությունը ընդհանուրի մեջ | 4.71% |

* - Տվյալները ներկայացված են 2007թ. դեկտեմբեր, 2008թ. հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս ամիսների համար:




Թողարկողը, պետական պարտատոմսերի առաջնային շուկայում հանդիսանալով միակ ոչ բանկ դիլեր, տնօրինում է պետական պարտատոմսերի շուկայի ծավալի 2.5-3.0%-ը (ներառյալ ազատ, գրավադրված, ինչպես նաև ռեպո համաձայնագրերով գրավադրված պարտատոմսերը): Արժեթղթերի շուկայում մասնագիտացված անձանց շարքում Թողարկողը զբաղեցնում է առաջին տեղը ըստ ակտիվների, ինչպես նաև ըստ պահառության հանձնված արժեթղթերի ծավալի: Թողարկողի ակտիվները կազմում են ներդրումային ընկերությունների ընդհանուր ակտիվների մոտ 30%-ը (աղբյուրը՝ www.armex.am), իսկ ըստ պահառության հանձնված արժեթղթերի ծավալի՝ մոտ 80%-ը (աղբյուրը՝ ՀՀ ԿԲ տեղեկագիր):

Աղյուսակ 5-ում ներկայացված են արժեթղթերի շուկայում մասնագիտացված անձանց սեփական կապիտալի և ակտիվների ընդհանուր մեծությունները, ինչպես նաև ընդհանուր մեծության մեջ Թողարկողի մասնաբաժինը:

*Աղյուսակ 5.*

| | **Սեփական կապիտալ (ՀՀ դրամ)** | **Ակտիվներ (ՀՀ դրամ)** |
|---|---|---|
| «ՏՈՆՏՈՆ» ՍՊԸ | 863,832,000 | 2,564,055,000 |
| Բոլոր մասնագիտացված անձիք | 1,945,855,000 | 10,301,196,000 |
| *Տոկոսային հարաբերակցությունը ընդհանուր մեծության նկատմամբ* | *44.39%* | *24.89%* |

**Աղբյուրը՝** www.armex.am ինտերնետային կայք, հուլիս 2008թ.:

## Թողարկողի ակտիվների մեծությունը




Հաշվի առնելով Թողարկողի գործունեության առանձնահատկությունները՝ խոշոր սպառողներ, որպես այդպիսիք, չկան:

դ. Թողարկողի հիմնական մրցակիցներն են արժեթղթերի շուկայում գործող մասնագիտացված անձինք, ինչպես նաև ՀՀ առևտրային բանկերը:

Մրցակիցների մասնաբաժինը շուկայում Թողարկողին հայտնի չէ:

Որպես նոր մրցակիցներ կարելի է դիտարկել արժեթղթերի շուկա մուտք գործող նոր ներդրումային ընկերությունները և այն առևտրային բանկերը, որոնք կսկսեն իրականացնել ներդրումային գործունեություն:

ե. Ելնելով Թողարկողի գործունեության առանձնահատկությունից՝ Թողարկողի համար մատակարարներ են հանդիսանում բանկային վարկեր և փոխառություններ տրամադրողները:

*Աղյուսակ 6. Թողարկողի այն մատակարարները (առևտրային բանկերը), որոնց բաժին է ընկնում ընդհանուր մատակարարման (բանկային վարկերի և փոխառությունների) ընդհանուր ծավալի 10 տոկոսից ավելին*

| Անվանումը | Բանկային վարկերի և փոխառությունների ընդհանուր ծավալում 10 տոկոսից ավելին կազմող պարտավորություններ (ՀՀ դրամ) | Ընդհանուրի մեջ տոկոսային մեծությունը | Փոխառության տեսակը |
|---|---|---|---|
| **31.12.2005** | | | |
| «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ | 251,078,853 | 11.21% | Ռեպո |
| «Ինեկոբանկ» ՓԲԸ | 446,127,600 | 19.91% | Ռեպո |
| «Յունիբանկ» ՓԲԸ | 235,187,007 | 10.50% | Ռեպո |
| «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ | 472,179,687 | 21.08% | Վարկ |
| «Արցախբանկ» ՓԲԸ | 309,173,224 | 13.80% | Վարկ |
| Ընդհանուր | 1,713,746,371 | 76.50% | |
| **31.12.2006** | | | |
| «Յունիբանկ» ՓԲԸ | 287,542,765 | 13.78% | Ռեպո |
| «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ | 618,402,903 | 29.64% | Ռեպո |
| «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ | 273,222,534 | 13.10% | Վարկ |
| «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ | 548,115,926 | 26.27% | Վարկ |
| Ընդհանուր | 1,727,284,128 | 82.80% | |
| **31.12.2007** | | | |

| | | | |
|---|---|---|---|
| «Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ | 594,899,349 | 35.52% | Ռեպո |
| «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ | 207,719,133 | 12.40% | Ռեպո |
| «Արմսվիսբանկ» ՓԲԸ | 323,970,994 | 19.34% | Ռեպո |
| «Կասկադ Բանկ» ՓԲԸ | 228,665,088 | 13.65% | Վարկ |
| Ընդհանուր | 1,355,254,564 | 80.92% | |
| **30.06.2008** | | | |
| «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ | 550,124,618 | 32.38% | Ռեպո |
| «Արմսվիսբանկ» ՓԲԸ | 373,322,870 | 21.97% | Ռեպո |
| «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ | 212,882,766 | 12.53% | Վարկ |
| «Կասկադ Բանկ» ՓԲԸ | 181,856,788 | 10.70% | Վարկ |
| Ընդհանուր | 1,318,187,042 | 77.58% | |

զ. Թողարկողի կողմից կնքված այն պայմանագրերը, որոնց գինը գերազանցում է Թողարկողի ակտիվների հաշվեկշռային արժեքի 3%-ը, մասամբ ներկայացված են հավելված 2-ում: Վերը նշված պայմանագրերի մի մասը համարվել է գաղտնի տեղեկատվություն, այդ իսկ պատճառով չի ներառվել ազդագրում և առանձին տեղեկանքով ներկայացվել է ՀՀ կենտրոնական բանկ:

է. Թողարկողը արտոնագրված է արժեթղթերի շուկայում մասնագիտական գործունեության հետևյալ լիցենզիայով՝ թիվ 0007 - ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա, տրված 27/06/2008թ.:

Վերը նշված լիցենզիան Թողարկողին տրված է անժամկետ:

**Թողարկողի գործունեության մեջ ներգրավված գույքի նկարագիրը**

*Աղյուսակ 7. Թողարկողի հիմնական միջոցները 30.06.2008թ. դրությամբ*

*հազ. ՀՀ դրամ*

| Հիմնական միջոցի անվանումը | Արժեք | Կուտակված մաշվածություն | Հաշվեկշռային արժեք | Հիմնական միջոցի տեսակարար կշիռը հաշվեկշռային արժեքի մեջ |
|---|---|---|---|---|
| Մեքենաներ և սարքավորումներ | 13,131 | 11,269 | 1,862 | 26.9% |
| Տրանսպորտային միջոցներ | 2,544 | 2,544 | 0 | 0.0% |
| Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ | 8,269 | 6,055 | 2,214 | 32.0% |
| Այլ հիմնական միջոցներ | 3,002 | 157 | 2,845 | 41.1% |
| Ընդամենը | 26,946 | 20,025 | 6,921 | 100.0% |

*Աղյուսակ 8. Թողարկողին պատկանող արժեթղթերը 30.06.2008թ. դրությամբ*

*հազ. ՀՀ դրամ*

| Արժեթղթի անվանումը | Արժեք | Տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ |
|---|---|---|
| Բաժնետոմսեր | 175,205 | 7.10% |
| Կորպորատիվ պարտատոմսեր | 162,486 | 6.59% |
| Պետական պարտատոմսեր | 2,097,911 | 85.06% |
| այդ թվում՝ գրավադրված պետական պարտատոմսեր | 702,440 | 28.48% |

| | | |
|---|---|---|
| Մուրհակներ | 30,877 | 1.25% |
| Ընդամենը | 2,466,479 | 100.00% |

Թողարկողն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ, ք. Երևան, Դեղատան 2 հասցեում գտնվող վարձակալությամբ վերցված տարածքում (195.68 ք.մ.):
Թողարկողի հիմնական միջոցները տեղակայված են իր գործունեության վայրում՝ ՀՀ, ք. Երևան, Դեղատան 2 հասցեում:

**Այն անձանց անվանացանկը, որտեղ թողարկողը, ներառյալ՝ նրա դուստր ընկերությունները, բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր են**

Թողարկողը չի հանդիսանում որևէ կազմակերպության բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր և չունի դուստր ընկերություն:

**Հարկային արտոնությունները**

Թողարկողը չունի օրենքներով և (կամ) այլ իրավական ակտերով իրեն վերապահված որևէ հարկային արտոնություն, և չկան Թողարկողի համար սահմանված հատուկ հարկային արտոնություններ:

**Դատական և իրավական ընթացակարգը**

*Աղյուսակ 9.*

| **Պատասխանատվու-թյան ենթարկող մարմինը, կիրառման ամսաթիվը** | **Պատասխանատվության ենթարկելու հիմքերը (պատճառները)** | **Տեսակը, չափը և կատարման աստիճանը** |
|---|---|---|
| ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչություն, 11.07.2007թ. | «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 1-ին, 76-րդ հոդվածի 3-րդ և 81-րդ հոդվածի 2-րդ մասերի հիմքով սահմանված ՀՀ ԿԲ խորհրդի 2006թ. դեկտեմբերի 5-ի թիվ 713-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքի» 66.1.4. և 66.1.6. կետերի պահանջների խախտում | Նախազգուշացում՝ նման խախտումները հետագայում բացառելու հանձնարարականով |
| ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչություն, 24.07.2007թ. | «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի, «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ ԿԲ խորհրդի 2006 թ. դեկտեմբերի 5-ի թիվ 713 Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքի» 73.10 կետի պահանջների խախտում | Նախազգուշացում՝ նման խախտումները հետագայում բացառելու հանձնարարականով |
| ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչություն, 24.07.2007թ. | «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ ԿԲ խորհրդի 2006 թ. դեկտեմբերի 5-ի թիվ 713 Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքի» 75.2 կետի պահանջների խախտում | Նախազգուշացում՝ նման խախտումները հետագայում բացառելու հանձնարարականով |
| ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչություն, 18.09.2007թ. | «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ ԿԲ խորհրդի 2006 թ. դեկտեմբերի 5-ի թիվ 713 Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի շուկայի | Բրոքերային գործունեության ԲԳ-0011 լիցենզիայի գործողության կասեցում 10 օրով՝ |

| | | |
|---|---|---|
| | կարգավորման կանոնագրքի» 73.10 կետի պահանջների խախտում | կասեցման հիմքերը հետագայում թույլ չտալու կարգադրությամբ |
| ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչություն, 23.10.2007թ. | «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ ԿԲ խորհրդի 2007թ. փետրվարի 20-ի թիվ 55-Ն որոշմամբ հաստատված «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևի (թիվ 001 հաշվետվական ձև) » հավելված՝ «Թիվ 001 հաշվետվական ձևի լրացման և ներկայացման ուղեցույցի» ընդհանուր դրույթների 5-րդ կետի «բ» ենթակետի պահանջների խախտում | Կարճել ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսկան վերահսկողության վարչության կողմից 2007թ. սեպտեմբերի 28-ի թիվ 80500/05 արձանագրությամբ սկսված վարույթը՝ խախտումը կամովին վերացնելու հիմքով: |
| ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչություն, 06.05.2008թ. | «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտում | Նախազգուշացում՝ արձանագրված խախտումները 10-օրյա ժամկետում ուղղելու և նման խախտումները հետագայում բացառելու հանձնարարականով |

**Փոխկապակցված գործարքների վերաբերյալ տեղեկություններ**

Աղյուսակ 10-ում ներկայացված են Թողարկողի այն բոլոր փոխկապակցված գործարքները, որոնք իրականացվել են վերջին երեք տարիներին և որոնց արժեքը գերազանցում է Թողարկողի ակտիվների հաշվեկշռային արժեքի 1 տոկոսը և/կամ 2 միլիոն ՀՀ դրամը:

*Աղյուսակ 10.*

| **Կողմի անվանումը (անուն, ազգանունը)** | **Գործարքի առարկա** | **Կատարման ամսաթիվ** | **Գործարքի արժեք (հազ. ՀՀ դրամ)** | **Գործարքի ընդհանուր մասնաբաժինը Թողարկողի եկամուտների ընդհանուր ծավալում (%)** |
|---|---|---|---|---|
| Վահագն Առաքելյան | Պետական պարտատոմսերի առուվաճառք | 31-07-06 | 10,924 | 0.20% |
| Վահագն Առաքելյան | Պետական պարտատոմսերի առուվաճառք | 17-11-06 | 12,320 | 0.22% |
| Արտաշես Առաքելյան | Պետական պարտատոմսերի առուվաճառք | 20-03-07 | 4,799 | 0.10% |
| Հասմիկ Առաքելյան | Պետական պարտատոմսերի առուվաճառք | 20-03-07 | 4,804 | 0.11% |
| Տաթևիկ Առաքելյան | Պետական պարտատոմսերի առուվաճառք | 20-03-07 | 4,804 | 0.11% |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արփի Առաքելյան | Պետական պարտատոմսերի առուվաճառք | 20-03-07 | 4,799 | 0.10% |
| Արտաշես Առաքելյան | Պետական պարտատոմսերի առուվաճառք | 17-04-07 | 5,941 | 0.13% |
| Համիկ Առաքելյան | Պետական պարտատոմսերի առուվաճառք | 17-04-07 | 5,880 | 0.13% |
| Տաթևիկ Առաքելյան | Պետական պարտատոմսերի առուվաճառք | 17-04-07 | 5,575 | 0.12% |
| Արփի Առաքելյան | Պետական պարտատոմսերի առուվաճառք | 17-04-07 | 5,524 | 0.12% |
| Վահագն Առաքելյան | Պետական պարտատոմսերի առքի ֆորվարդ | 25-04-07 | 102,211 | 2.23% |
| Վահագն Առաքելյան | Պետական պարտատոմսերի առքի ֆորվարդ | 27-04-07 | 102,244 | 2.24% |
| Վահագն Առաքելյան | Պետական պարտատոմսերի առուվաճառք | 26-06-07 | 35,978 | 0.79% |
| Վահագն Առաքելյան | Փոխառության տրամադրում «ՏՈՆՏՈՆ» ՍՊԸ-ին | 16.07.2007-29.10.2007 | 45,000 | 0.98% |
| Սաթենիկ Առաքելյան | Պետական պարտատոմսերի առուվաճառք | 20-07-07 | 10,000 | 0.22% |
| Վահագն Առաքելյան | Պետական պարտատոմսերի առուվաճառք | 03-10-07 | 10,573 | 0.23% |
| Վահագն Առաքելյան | Պետական պարտատոմսերի առուվաճառք | 05-10-07 | 104,721 | 2.29% |
